

**ՈԱԴԻՈՆՈԿԼԻԴՆԵՐԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԱՆԽՈՒՆԻ ԴԵՂԱՀՈՒՄՔՈՒՄ  
ՀԻԴՐՈՊՈՆԻԿ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Ղալաջյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Ավանդական և ոչ ավանդական բժշկության մեջ առավել պահանջարկ ունեցող բազմամյա բուսատեսակներից է մերձարևադարձային ծագում ունեցող կալամխոն: Նրա 200 տեսակներից մեկի՝ փետրածև կալամխոնի (*Kalanchoe pinnata* (Lam) Pers.) վերգետնյա զանգվածից պատրաստված «կալամխոնի հյութ»-ը արտաքին օգտագործման դեղամիջոց է և մեծ կիրառում է գտել բժշկության մեջ: Բույսը, լինելով ջերմասեր և ոչ ցրտադիմացկուն, մեր մշակած կենսատեսխնուլոգիայի ներդրման արդյունքում, աճեցվում է որպես միամյա: Բացօթյա հիդրոպոնիկայի և հողային պայմաններում դեղահումքի արտադրության համար որպես տնկանյութ օգտագործվել են՝ *in vitro* մշակույթում աճեցված ծագուկները և միկրոբուսակները, ինչպես նաև ավանդական եղանակով ստացված կտրոնները: Դեղահումքի որակի վերահսկման նպատակով հիդրոպոնիկայի և հողային մշակույթի պայմաններում աճեցված կալամխոնի դեղահումքում ուսումնասիրվել են արհեստական ( $^{90}\text{Sr}$ ,  $^{137}\text{Cs}$ ) և բնական (U) ռադիոնուկլիդների (ՌՆ) կուտակման առանձնահատկությունները: Պարզվել է, որ արհեստական ՌՆ-ի պարունակությամբ հիդրոպոնիկ (78,5Բք/կգ) և հողային (77,0Բք/կգ) պայմաններում աճեցված մշակաբույսերից ստացված բուսահումքը էապես չի տարբերվում, մինչդեռ Ս-ի պարունակությամբ հիդրոպոնիկ մշակաբույսերը (0,9-1,3)·10<sup>-6</sup>% զիջել են հողայիններին (1,4-1,8) ·10<sup>-6</sup>%): Ըստ երևույթին, դա պետք է բացատրել լցանյութերի համեմատ, հողում Ս-ի գերազանցող պարունակությամբ: Հրաբխային սև խարամ լցանյութի դեպքում մշակաբույսերը բնական (1,1-1,4 անգամ) և արհեստական (1,5-1,6 անգամ) ՌՆ-ի պարունակությամբ զիջել են գլաբար տեսակին: Այսպես՝ խարամ լցանյութում միկրոկտրոնի, ծագուկի և կտրոնի դեպքում  $^{90}\text{Sr}$ -ի և  $^{137}\text{Cs}$ -ի գումարային պարունակությունը կազմել է, համապատասխանաբար, 69,8; 79,9; 69,0, իսկ գլաբարի դեպքում՝ 82,8; 84,9; 85,0 Բք/կգ: Այսպիսով, կալամխոնի հիդրոպոնիկ մշակույթում ռադիոնուկլիդական տեսակետից ակնհայտ է խարամ լցանյութի տարբերակի առավելությունը գլաբարի համեմատ: Պարզվել է նաև, որ տարբեր տնկանյութերից ստացված դեղահումքը հաղիոքիմիական հատկություններով չի տարբերվում, իսկ վերահսկվող  $^{90}\text{Sr}$ -ի և  $^{137}\text{Cs}$ -ի պարունակությունը չի գերազանցում սահմանաթույլատրելի խտությունները (ՍԽԹ  $^{90}\text{Sr}$ -100,  $^{137}\text{Cs}$ -400Բք/կգ):

Այսպիսով, կալամխոնի դեղահումքի արտադրության հիդրոպոնիկական եղանակը ռադիոնուկլիդապես առավել նախընտրելի է, քան հողայինը՝ հրաբխային սև խարամ լցանյութի օգտագործմամբ:

Sargsyan E.D., Ghalachyan L.M., Vardanyan A.P.

**CONTENT OF RADIONUCLIDES IN MEDICINAL RAW MATERIAL OF KALANCHOE UNDER HYDROPONICS AND SOIL CONDITIONS**

G.S. Davtyan Institute of Hydroponics Problems NAS RA

**Summary**

Hydroponics method of production of *Kalanchoe pinnata* (Lam) Pers. medicinal raw material radioactively is more convenient rather than soil conditions. From the radio-ecological point of view the use of volcanic slag substrate is preferable in *Kalanchoe* soilless culture.